

Ք Ս Ս Ա Ն Վ Ե Ց Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի

Մ Շ Ա Կ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Ղ Է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Ղ Է Ք Օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ր Գ Ր Ի Գ Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՆԵՐԿԱՅ 1898 ԹԻՒ

Մ Շ Ա Կ

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

Մշակի տարեկան գինը թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան (Բազարնայա և Բարձրակայա փողոցն. անկիւն):
Ուրիշ քաղաքներից պետք է դիմել այս հասցեով. ТИФЛИСЪ, редакция «Мшакъ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «Mschak».

Ցայտարարութիւններ ընդունվում են թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն և թէ՛ օտար լեզուներով:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Միայն տեսակէտ, Դատարի գանձարանի շուրջը. Բիւսարի. Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ ներանդից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Չինական յեղափոխութիւն. Պատերազմ. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. — ԻՍՏԱՆ ԼՈՒՐԵՐ. — ՀՅՈՒՄՈՒՐՆԵՐ. — ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Բնակիչներու և հոգևորականութիւն:

ՍՄԱԼ ՏԵՍԱԿԷՏ

Այս օրերս անգլիական պարլամենտը թոյլ տուեց իրան մի սխալ, որը բարոյական ազդեցութիւն կունենայ և ուրիշ երկիրներ չհասարակական կարծիքի վրա: Պարլամենտը մերժեց ծաղիկ կտրելու պարտաւորեցուցիչ լինելը և նրան զարձրեց կամաւոր և պայմանական: Թէև վիճակագրական տեղեկութիւնները հաստատուեցն ապացուցել են, որ ծաղիկները և մեծ օգուտ է տալիս ազգայնականութեան և զգալի կերպով նուազեցնում է մահացութիւնը, այնու ամենայնիւ, պատգամաւորների մեծամասնութիւնը, ցանկանալով յարմարվել ժողովրդին և հասնել նրան, կայացրեց մի սխալ և ան-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԻՆՏԵԼԻԳԵՆՏԻՍ ԵՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

I
Մտքի ազատ թռիչքը բացակայում է մեր մէջ: Այս բացակայութիւնն անշուշտ ունի իր պատմական պատճառները: Բայց ցաւալին այն է, որ մարմնով ստրկացած՝ մենք ստրկացրել ենք և մեր հոգին ու միտքը, ուստի և ինքներս ենք խորում, զգուշանում ազատ թռիչքներից: Վնասակար համարելով նրանց մեզ համար: Այս վերջին պարագան է՝ որ մեր կանախ լիլիզմ մտցնելով մեր մտաւոր ու բարոյական աշխարհաճանաչանքների մէջ՝ օր օրի վրա աւելի և աւելի է վատթարացնում մեր կացութիւնը: Ասիական անշարժութիւնը և թմբուկիւնը տիրում են մեր մէջ և թէև մենք սիրում ենք մեզ կուլտուրական, առաջադէմ ազգ անուանել, բայց իսկապէս գոյում ենք կուլտուրայի և առաջադիմութեան առաջ, որովհետև ոտքից մինչև գլուխ թաղված ենք նախապաշարմունքների մէջ, որովհետև խիստ ենք սիրահարված մեր ոչ էլ անբան պայծառ (կուզէինք ասել նոյնպիսի տմարդի) անցեալի հնացած, բորբոսած մասունքների վրա: Մենք կասկածում ենք թէ մի գուցէ կուլտուրան և առաջադիմութիւնը քշեն ու տանեն մեր հնութիւնները և կամ—աւելի ճիշդը—նրանց բորբոսած մասունքները, որոնց կոյր երկրպագուներն ենք: Եւ մեր այս կասկածը, մեր ան ու գողը ճգնում ենք վերագրել ազգային ինքնուրոյնութեան գաղափարին, որով ժամանակ առ ժամանակ առանց կարմրելու

համակրելի որոշում—զարձնել ծաղկահատութիւնը կամաւոր: Գերմանիան, որտեղ մտքած է ծաղկահատութեան պարտաւորեցուցիչ լինելու օրէնքը, այնքան պերճախօս կերպով ցոյց է տալիս այդ օրէնքի անհրաժեշտութիւնը, որ իւրաքանչիւր պետութիւն պետք է միայն օգտվէր այդպիսի օրինակից և ինքն ևս հետեւէր նրան: Սակայն ներկայ դէպքը վկայում է, որ նոյն իսկ ամենալուստւորված երկիրներում ժողովրդի պատգամաւորները և ղեկավարող անձինք կարող են դէմ լինել մի նոր, օգտաւէտ գործի, որը այս կամ այն պատճառով տհաճութիւն է պատճառում մարդկանց: Եթէ աչքի առաջ առնենք մարդկանց այս և այն տարամարտութիւնները և նրանց պատճառով մերժեցր զանազան անհրաժեշտ բարենորոգութիւններ, այն ժամանակ պետք է բողբոջվին դէն գցելը սանիտարական, առողջապահական շատ պարտաւորութիւններ և թոյլ տանք, որ մարդիկ զանցառու լինեն այնպիսի գործերում, որոնցից վնասվում են թէ՛ իրանք և թէ՛ շրջապատողները: Ուրիշ խօսքով հաշվենք այն խառնիճաղանձ, անկուլտուրական կեանքի հետ, որ տեղի ունի մեր երկիրներում,

պարծենում ենք և պարծենում ենք համոված լինելով՝ որ իբր թէ հնութիւնների բորբոսած փշրանքների վրա հիմնված ինքնուրոյնութիւնը կարող է ապահովել մի հասարակութիւն, մի ժողովուրդ կործանումը: Անցեալի «փառքով», ինքնախաբէութեամբ, ինքնուրոյնութեան բորբոսած փշրանքներով ոչ մի հիւանդ մարմին չէ կազդուրվել և չէ էլ կարող կազդուրվել ու վերականգնել: Ով իրան բժշկի է անուանում, նա մի կողմ պիտի գցէ նախապաշարմունքները: Դժուար է նախապաշարմունքներից ազատվել, որովհետև սրբան էլ նախապաշարմունքն անհիմն լինի, նա միշտ ունի իր հրապուրելի կողմերը: Սակայն հասարակական գործիչը, հրապարակախօսը իրաւունք չունի անհիմն հրապարակախօսութեամբ վրա դնել իր խօսքը իր գործը: Մենք հիւանդ ենք և հիւանդ ենք հոգով, մարմնով ու մտքով և անա—բժշկի օգնութեան դիմելու տեղ՝ մեզ խորհուրդ են տալիս դիմել փալչու օյիւրեալութիւններին, որովհետև—ասում են մեր խորհրդատուները—պայպէս են արել մեր հայրերը, մեր պապերը: Իսկ թէ որ աստիճան թունաւորել, փչացրել են փալչիւնները մեր հայրերի, պապերի մարմինը, միտքն ու հոգին, զբա մասին նրանք չեն խորհում, որովհետև նախապաշարված են բժշկի դէմ, կասկածում են որ մի գուցէ բժշկիչը չի հասկանալ հայի ինքնուրոյն հիւանդութիւնը: Սակայն ինքնուրոյն հայկական հիւանդութիւնը չէ կայ: Հայի մարմինը նոյնն է, ինչ և անդրազգու, գերմանացու, ֆրանսիացու և այլն: Ուրեմն հայի հիւանդութիւնն էլ նոյնը պիտի լինի, ինչ հիւանդութիւնն ունէին անգլիացին, գերմանացին, ֆրանսիացին և այլն, երբ սրանք պատկած էին հիւանդի անկողնու մէջ: Ծարբերութիւնը ոչ թէ ինքնուրոյնութեան մէջ է, այլ

որտեղ պարտաւորութիւններ չեն ճանաչվում և ամեն բան գտնվում է բարձի թողն արված դրութեան մէջ: Անգլիական պատգամաւորներից մէկն այնքան պարզախօս եղաւ, որ յայտնեց, թէ նա դէմ է պարտաւորեցուցիչ օրէնքին միայն այն պատճառով, որ իրան ընտրողներն այդպիսի տրամադրութիւն են ցոյց տալիս այդ հարցի վերաբերմամբ: Իս դատողութեան սխալ ձև է: Գիտութեան, առողջապահութեան վերաբերմամբ ժողովրդի, մանաւանդ տղէտ ժողովրդի ներկայացուցիչը բողբոջվին ուրիշ պարտաւորութիւններ ունի, քան թէ այն դէպքում, երբ հարցը վերաբերում է, օրինակ, քաղաքական դէպքերին: Այն ինչ որ գիտութեան պարզած մի ճշմարտութիւն է, չը պետք է վտանգվի մի այնպիսի թէև բարձր, սկզբունքի առաջ, ինչպէս ընտրողական սկզբունքն է: Ընտրողը այս դէպքում պետք է աշխատի, որ պաշտպան հանդիսանայ ճշմարտութեան ձայնին և ասպարէզ եկած լաւ գործը և լաւ առաջարկութիւնը դարձնի ժողովրդի սեփականութիւն: Այդպէս պիտի հասկանայ ընտրեալը և պատգամաւորը իր պարտաւորութիւնը, որպէս զի նա դառնայ հասարակութեան շահերի արտայայտիչ:

ԳԱՏԱՐԿ ԳԱՆՁԱՐԱՆԻ ՇՈՒՐԱԶ

Թիւրքիայի մայրաքաղաքում այժմ կատարվում է դարաւոր կոմերցիայի մի նոր գործողութիւն: Օտար պետութիւնները պահանջում են Բ. Կոնստանդուպոլիսում այն վնասները, որ իրանց հպատակները կրել են հայկական կոտորածների ժամանակ: Ներկայացրած հայեր հասնում է մօտ երկու միլիոն ռուբլու: Անգլիան, Փրանսիան և Ամերիկան պահանջում են 500 հազար ռուբլի ամեն մէկը: Գերմանիայի պահանջը 30000 ռուբլի է: Սուլթանը վճել է մերժել այդ հաշիւները և հրամայել է իր քառասունչորսերին, որ իրան ոչինչ չը հարգուին դեպքում պահանջների մասին, որոնք կրկնվում են ամեն շաբաթ: Եւ որովհետև դրանից բան չի

նրա, որ, օրինակ, իտալացին մի յայտնի չափով բժշկվել է իր հիւանդութիւնից, մինչդեռ մենք դեռ ևս շարունակում ենք տառապել այն հիւանդութեամբ, որը ունի և իտալացին: Որքան և խօսելու լինեն հայկական հնութիւնների պաշտպանները, այնու ամենայնիւ իրենք ընթացքը վաղ թէ ոչ ցոյց կը տայ նրանց, որ մենք կը բժշկվենք միայն այն ժամանակ, երբ կընդունենք անպայման կերպով հանրամարդկային բժշկութեան հիմնական սկզբունքները: Սրանով մենք չենք ուզում ասել, որ հիւանդ հայութիւնը իր բժշկութեան համար կապիկի նման պիտի ընդօրինակէ իտալական միջոցները: Երբեք: Իւրաքանչիւր մարմին իր առանձնապատկութիւններն ունի, անա թէ ինչու համար իւրաքանչիւր բժշկի՛ նախ քան բժշկելը, դարման տալը, ուսումնասիրում է իր պացիենտի ներքին կազմը, հետազոտում է նրա մարմինը և այլն և ասպ է միայն առաջարկում հիւանդին այս կամ այն միջոցը: Մի և նոյն հիւանդութեամբ տառապող երկու տարբեր կազմուածքի անձնաւորութիւններին անկարելի է միշտ և ամեն պարագայում մի և նոյն միջոցը տալ: Բայց ճիշդ սրա համար էլ այս պարագան աչքի առաջ առնելով է, որ մենք պիտի դիմենք իւր մտտ բժշկի օգնութեան և ոչ թէ փալչու կամ հնայովի:

դուրս գալ, փաղիչանք դիմում է ուրիշ միջոցներին, մերթ գրում է պետութիւններին թէ մենք դաւորները հայերն են և նրանցից էլ պէտք է ստանալ բոլոր վնասները, մերթ դառնում է պանդաւառուր և ասում է, որ կոտորածների ժամանակ սպանված են նոյնպէս և թիւրքերը, որոնց ընտանիքները, այնու ամենայնիւ, վնասներ չեն պահանջում: Բայց վեհափառ խալիֆը տեսնում է, որ գեաւորները ձեռք չեն վերցնում իրանց պահանջից, ժամանակակից Եւրոպան, որ առևտրական շահերի համար պատրաստ է աշխարհ տալիս ու վրա անել, միթէ հեշտութեամբ կը հրաժարվի այն խոշոր դուժարներէն, որ պիտի քլել առանց այդ էլ զգգոված օտանդիցի: Գեաւորները գտել են ապահով միջոցը. փառք Ալլահին, այժմ թիւրքաց պանդաւառում ոսկիներ են երևում, որոնք տասնյկէ են կամ պիտի ստացվեն Յունաստանից: Փրանսիան արդէն արգելք դրաւ այդ ոսկիների մի մասի վրա. ինչ կասկած, որ մնացած պետութիւններն էլ կը հետեւեն նրա օրինակին: Ինչ անի փաղիչանքը ձարահատված, նա հիմա ասում է թէ Յունաստանի պատերազմական տուգանքը անձեռնադիմելի է, քանի որ պետութիւնները երաշխաւորել են, որ այդ տուգանքն ամբողջովին կը մտնի թիւրքաց պանդաւառը: Բայց այդ առակն էլ չի օգնի. գեաւորները լաւ միջոց են գտել և կողպտում են Ալլահի ստուգելին:

Բ Ի Ս Մ Ա Ր Կ

IV
1851 թվին Բիւսարի մտաւ դիպլոմատիական ասպարէզը, ուր նա գործեց իբրև դեսպան Փրանսիոստում, ապա Պետերբուրգում և Պարիզում մօտ 11 տարի, մինչև 1862 թիւը: Դիպլոմատիական այդ շրջանը համարվում է իբրև սկիզբն նրա իսկական պետական գործունէութեան. այդ ժամանակից էլ սկսվում է նրա գործունէութիւնը արտաքին քաղաքական հոգեւորական ասպարէզում: Այդ ասպարէզի վրա սուք կոխած օրից անշուշտ կերպով հետեւց այն երկու սկզբունքներին, որոնցով նա ղեկավարվում է իր ամբողջ կեանքում. և՛ «Ոյժը ընթանում է իր առաջը» և՛ «Երբ անհրաժեշտ է ընդհատել իր անհրաժեշտը»:

Այսու թիւն ժամուցանել այն հասարակութեան՝ որի մէջ ապրում է, այն ժողովրդին ու ազգին՝ որին պատկանում է, դիմում է պ. Խ. Մարտիանին նրա խորհուրդը հարցնելու հոգևոր քառասուկարի նկատմամբ, այսինքն՝ թէ որ աստիճան նապատակաւորմար կը լինի յիշեալ ինտելիգենտի գեների համար հոգևոր կոչում ընդունելը՝ Նախ և առաջ մեզ դարձացնում է յիշեալ ինտելիգենտ երիտասարդի հարցը: Միթէ այսօր է—երբ հայը չնից էլ վար է դասվում—որ վերոյիշեալ ցանկութիւններով տողորված ինտելիգենտը պիտի տատանվէր գործունէութեան ասպարէզ ընտրելու հարցում: Կանխիկեմտ ասելով՝ մենք չը պիտի հատկանանք դիպլոմատու միայն: Կոտորելիկեմտն չէին կարող ծանօթ չը լինել հայկական ցաւերը: Արդ այդ ինչպէս է պատահում, որ այդ ցաւերի հետ ծանօթ մի անհատը տատանվում է, չէ կարողանում ինքն իրան, առանց ուրիշի օգնութեան, ընտրել գործունէութեան այս կամ այն ասպարէզը: Բայց սրանով չէ վերջանում այն մտաւոր խառնաշփոթութիւնը, որը տիրում է հայ ինտելիգենտ երիտասարդութեան մէջ: Նրանք, որոնք դեռ նոր են ուղում կեանքի մէջ մտնել—կարող են և անփորձ լինել (թէև այդ աստիճան անփորձութիւնը դոնէ մեզ համար մի քիչ անհասկանալի է թվում): Ինչ են պատասխանում անփորձ ինտելիգենտին նրա փորձված եղբայրները. նրանք, որոնք արդէն ընտրել են իրանց համար գործունէութեան ասպարէզը, նրանք, որոնք պատկանում են soi-disant առաջադիմական կուռակցութեան: Պ. Մարտիանի պատասխանը յայտնի է, նա, յայտնի պատճառաբանութիւններ առաջ բերելով՝ բացասական պատասխան է տալիս իրան դիմողին: Եւ անա «Մշակի» մէջ, մի քանի մշակականների կողմից

րի մէջ պէտք է որոնել թէ՛ նրա հայեացքների փոփոխութեան և թէ՛ շատ առիթներով ցոյց տուած անուղղատուութեան պատճառները:

Անք տեսանք, թէ ինչքան նա բարեկամ էր Աւստրիային և իբրև պատգամաւոր, պրուսական պարլամենտի մէջ, այն միտքն էր արծարծուած, թէ Աւստրիան և Պրուսիան պէտք է ձեռք ձեռքի տուած, համերաշխ ընթանան ընդհանուր թշնամու—ժողովրդական շարժման դէմ, թէ Աւստրիան պէտք է մնայ պարագլուխ գերմանական դաշնակցութեան: Սակայն երբ նա մնաց Տրանսիլուանի մի քանի ժամանակ, երբ նա 1852-ին գնաց Վիեննա, մաքսային դաշնակցութեան դրոշմով, նրա հայեացքների մէջ արմատական փոփոխութիւն առաջ եկաւ. համակողք բարեկամից նա դարձաւ Աւստրիայի դիւրբար թշնամին և այնուհետև ամեն ջանք դործ դրեց հարուածելու Աւստրիային, թուլացնելու և ստորացնելու նրան: Կիլլոմատիական ատպարէզը ոտք կոխելուց առաջ, նա ասում էր. «Աւստրիայի մէջ ես տեսնում եմ ներկայացուցիչ և ժառանգ չին գերմանական հզօրութեան, որ այնքան անզամ փառքով մերկայացել է գերմանական սուրբու: Իսկ այժմ, նա ներշնչուած էր իր կառավարութեան այն միտքը, թէ Աւստրիան և Պրուսիան չեն կարող ապրել խաղաղութեամբ, մինչև որ նրանցից մէկը դուրս չը գցվի գերմանական դաշնակցութիւնից: Պէտք է ասել, որ անձնական դպացուները, վիրաւորված ինքնասիրութիւնը ևս դեր էին խաղում այդտեղ. Աւստրիայի ներկայացուցիչները Տրանսիլուանու խորտաբար էին վերաբերում Բիւմարկին, իսկ սա ևս յետ չէր մնում նրանցից: Ցանկալիութեան հասցրած համարձակութիւնը—Բիւմարկի կենքի բնորոշ դիժը.— սաստիկ լաւրում էին յարաբերութիւնները: Մինչև Բիւմարկի Տրանսիլուան դալը այնպիսի սովորութիւն կար, որ սէյմի նիստերի ժամանակ ծխում էր միայն նախապահը, Աւստրիայի ներկայացուցիչը: Մի օր, նիստի ժամանակ, Բիւմարկի հանդէս ընդ խախտող և սկսեց ծխել. նրա օրինակին հետեւեց Բաւարիայի դեպուտան՝ իրան ոչնչով պակաս չը համարելով Պրուսիայի դեպուտանից. բայց ուրովեհետ նա իր կենսընում երբեք չէր ծխել, ուստի սիրուր խառնեց և չը նայելով Վիւննայի ղեկավար, այնուամենայնիւ շարունակում էր ծխել, մինչև Բիւմարկը դադարեցնել ծխելը: Հետագայում դաշնակցութեան միւս ներկայացուցիչները ևս սկսեցին ծխել. առաջ եկաւ իրաւաբանը: Մի ուրիշ օրինակ. Այլմի մի այլ նիստում Աւստրիայի նոր դեպուտան—Օստէնը մի յայտարարութիւն է անում, որ թէ ևս բոլորովին չէր համապատասխանում ձեռնարկութեան, բայց շատ երկրորդական նշանակութիւն ունէր. Բիւմարկի յայտնում է, որ կասկածում է Աւստրիական դիւրբարի խօսքերի ճշմարտութեան մասին: Օստէնը, վիրաւորվելով, բարձրացնում է ձայնը և ասում. «Ես չեմ, ձեր կարծիքով, կայսերական—թագաւորական կառավարութիւնը սնու է խօսուած:—Անտարակոյտ, ձերը դերասկավում է արշաւանք պ. Մարլենանի բացասական պատասխանի դէմ, մի արշաւանք, որի հիմնաբարն է ոչ թէ իրական կենսըն, ժամանակամիջոցի պահանջը և առաջադիմութեան ընթացքը, այլ ինչն այն, ինչի վրա հիմնվելով միայն կարող է խօսել առաջադիմականը, այլ հնապաշտութիւնը, նախապաշարմունքները և առհասարակ խաւարածիւնների ամբողջ արքունար:»

II

Վար ժամանակ, երբ հոգևորականութիւնը ինչպէս ամեն տեղ, նոյնպէս էլ և հայկական կենսընում անպիտան, լուսաւոր և առաջադէմ դեր էր խաղում: Հայտնի էր այն ժամանակ խաղաղութիւն էր խոր միտքութեան մէջ: Հոգևորականութիւնն էր, որ առարձում էր քրիստոնէական հաւատի լոյսը, առաջադէմ վարդապետութիւնը մեր հեթանոս նախնայրերի մէջ: Նա էր որ մտաւոր ու բարոյական մտանօղ էր մտապարարում համայն հայութեանը: Եկեղեցու բնք այն ժամանակ միակ տեղն էր, որտեղից հայ ժողովուրդը ըստ էր բարոյական խրատ: Վանքերը մեր միակ կրթական կենտրոններն էին, որտեղ մատաղ սերունդն ստանում էր մտաւոր մտանօղ: Մեր միակ ուսուցիչները վարդապետներն էին: Մեր միակ գրագէտները՝ հոգևորականները: Մեր առաջին պատմաբանը վանական էր: Հայկական տառեր հնարողները հոգևորականներ էին: Եւ այն, և այն, և այն: Ո՞վ կարող է ուրանալ մեր (և առհասարակ) հոգևորականութեան այս և մի շարք ուրիշ ծառայութիւնները:

Բայց ժամանակն ընթանում է և առանց երբեք կանոն անելու և կամ յետ նայելու: Աշխարհիս երեսին մնացուն ոչինչ չը կայ, այլ ամեն ինչ

զանցութիւն, պատասխանում է հանդարտօրէն Բիւմարկը: Մի երրորդ օրինակ: Միւնիխում մի զորահանդէս կար ի պատիւ մի Աւստրիական զինեարի: Բիւմարկի զալիս է զօրահանդէս կուրծքը զարդարած զանազան շքանշաններով, որ ստացել էր գերմանական մանր պետութիւններից, իբրև դեպուտան սէյմի մօտ: Աւստրիական զինեարը, տեսնելով բոլոր այդ շքանշանները, հարցրեց. «Ո՞րտեղ և որ թշնամու դէմ կուզելով էք ստացել...»—«Թշնամու դէմ... Տրանսիլուանում, պատասխանեց իսկոյն Բիւմարկը:

Մի անգամ, որ Բիւմարկի մտքումն զրեց տաւալը Աւստրիային և զգաց, որ շուտ թէ ուշ ընդհարում պէտք է տեղի ունենայ այդ պետութեան և Պրուսիայի մէջ, նա սկսեց եռանդուն կերպով դործել այդ ուղղութեամբ: Այդ միջոցին ծագեց Վրլմի օպտերազմը, որի վրա Բիւմարկի նայեց իբրև մի լաւ միջոցի՝ հարուածելու Աւստրիային: Նա շատ ուրախացաւ, որ Աւստրիան նոյնպէս դուրս եկաւ Ռուսաստանի դէմ, մտանալով այն մեծ ծառայութիւնը, որ Նիկոլայ կայսրը ցոյց էր տուել Աւստրիական կառավարութեան ունգարական պատերազմի ժամանակ: Բիւմարկի բոլոր նպատակն էր մեկուտացնել Աւստրիան, որպէս զի ոչ ոք նրան օգնութեան չը հանիր, երբ նրան վերջնական հարուած հասցնելու ժամանակ կը գայ: Նա աշխատեց բարեկամութիւն պահպանել Ռուսաստանի հետ և չը գրգռել Տրանսիլուան Պրուսիայի դէմ, այլ ընդհակառակը, ընդհարում առաջ բերել այդ պետութիւններին և Աւստրիայի մէջ: Տեսնելով որ Գերմանիայի վերաբերմամբ՝ Աւստրիայի և Պրուսիայի մրցութեան հարցը զինքով պէտք է լուծվի, Բիւմարկի ջանք էր անում, որ Արեւելեան պատերազմի վերջնալուրջ յետոյ, Նապոլէոն III-ի համահրութիւնը գրաւի դէպի Պրուսիան: Ռուսաստանի կողմից նա վտան էր: Եւ նրա բոլոր ծրագրերն էր աջողութեամբ պատկզեցին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Յուլիսի 19-ին Երկաթուղու գծի որոշման աշխատանքները մեծ եռանդով առաջ են տարվում: Բաւական թւում ինծեհներք՝ բաժանված մի քանի խմբեր՝ միաժամանակ մի քանի տեղերից են ուսումնասիրում գիծը: Այժմ մի խումբ ուսումնասիրում է Ալեքսանդրօպոլից մինչև Զուլֆա—իսկ մի ուրիշ խումբ Երևանից մինչև Զուլֆա—մինչև Պարակաստանի սահմանը: Առ այժմ ենթադրվում է, թէ երևա հաստատ ենթադրութիւն, զիժը անցկացնելու Ալեքսանդրօպոլից Սարդարաբադի, Ելմի-սանի, Երևանի, Ետրուրի և Հին-Նախիջևանի վրայով, փոփոխութիւնն աննշան կը լինի: Մտորելու նախնադպետի ձեռք առած միջոցների և քաղաքի կողմից անելիք դոտորութիւնների՝ սպասվում է, որ գլխաւոր կայարանը շինվի Երևանի կողքին Մլեր կոչված տեղում: Այժմ այս ու այն

կերպարանափոխում է և կերպարանափոխում է այնպէս, որ ոչ միայն հասարակական դասակարգեր, այլ ամբողջ ազգութիւններ անհետանում, ոչնչանում են այս աննշան կերպարանափոխութեան մէջ: Թշուառ պիտի լինի մարդկութիւնը, եթէ երկար դարերի ընթացքում մի և նոյն դասակարգը շարունակէր մի և նոյն դերը խաղալ: Նոյնը ամենայն իրաւամբ կարելի է ասել և իր բազանիւր ազգի, մարդկութեան մեծ ընտանիքի այս կամ այն անդամի վերաբերմամբ: Պայծառ և մի և նոյն ժամանակ վերջին ծայր ցաւալի օրինակ մեր ասածին մահմետական աշխարհը, Հնդկաստանը: Եթէ մենք մի քովք ենթադրելու լինենք որ մի դասակարգ չի կորցնի մի յայտնի ժամանակամիջոցից յետոյ իր նշանակութեան մէջ: Թշուառ պիտի լինի մարդկութեան մենք պիտի մնա բարով ասելիք ոչ միայն առաջադիմութեան, այլ գուցէ և մարդկութեան գոյութեան:

Մի ժամանակ հոգևորականութիւնն էր, որ կուզում էր խաւարի դէմ: Եւ ուրիշ կերպ էր չէր կարող լինել, որովհետև այն ժամանակ խաւարի դէմ կուզելու միջոցները հոգևորականութեան ձեռքին էին—եկեղեցու բնքը, գրագիտութիւնը, վանք-դպրոցը և այլն: Սակայն այսօր այդ միջոցները և ոչ մի դասակարգի մծօնօրօրի վրա տարածվում է ժողովրդի ամենապիտան կամ խաւարի մէջ: Վանք-դպրոցն այսօր կորցրել է իր նշանակութիւնը, քանի որ մենք, յետամնաց հայերս, մինչև իսկ մեր գիւղերում ունենք կամ ունէինք դպրոցներ: Բայց վանքը միայն կարողի դերը չէր կատարում. նա մի և նոյն ժամանակ վանք-դպրոցն, վանք-գրագիտական-թանգարան էր: Բայց անա ծնվում է Հայ-

կողմ ուղարկվում են վրաններ, աշխատաւոր մարդիկ՝ ճանապարհը որոշելու և նշանները տրուելու համար: Աշխատանքները կսկսվին աշնանից գծի երկու ծայրերից միաժամանակ, այն է՝ Ալեքսանդրօպոլից և Զուլֆայից. նոյնպէս կը կառուցվին և կայարանները, այնպէս որ ենթադրում են, թէ Երևանի դիժը պատրաստ կը լինի 1900 թ.ին:

Երևանի շուկայում ցորենի գինը զգալի կերպով իջաւ. ամենալաւ ցորենի խաբլարը ծախվում է 30 ռուբլի, իսկ սովորական ցորենը 24—25 ռուբլի: Թխած հացը փոխանակ լիւրը 24 կոպէկով ծախելու, ամսի 17-ից ծախվում է 32 կոպէկով: Այս գինը համեմատած ցորենի մահաւախի՝ շատ թանկ է, քաղաքային դուրման բաւական անտարբեր է, և ժողովրդի բողբոջները ուղղվում են նախնադպետին: Ահա այսպիսի նախնադպետներ աւելի կարեւոր են դարձնում, որ նորընտիր դուրման, որքան կարելի է շուտ դործի դրուի անցին:

Ետևով կրկին Պարսկաստան է գնալու ռուս բանակայ Սենատիկին, որը անցեալ տարի Ուրմիի շրջաններում բազմաթիւ ասորիների ուսուցաց եկեղեցու գիրկն ընդունեց: Լուր կայ, որ կրօնափոխութեան նոր հարցեր են ծագել այնտեղ: Ա—Գօ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Մեր կարգայինը Պետերբուրգի լրագիրներում, որ երգու և երկերի դատարան կը մտնի միայն Ստաւրոպոլի և Կուբանի նահանգներում, իսկ վերաբերում է Անդրկովկասի նահանգներին, կերպարների դատարանը դեռ վաղածած է համարված: Միթէ ճիշդ է այդ անախտը լուրը:

«С. Петербургскія Вѣдомости» լրագիրը, Անդրկովկասում տեղի ունեցած անախտը դէպքի առիթով նուրբեց մի շարք յօդուածներ մասնաշաղկաններով մէջ երկացող շարժումներին: Այդ յօդուածների մէջ լրագիրը այն միտքն է յայտնում, թէ մասնաշաղկանների վիճակի վրա պէտք է առանձին ուշք դարձնել, ձգտելով կործնել նրանց ֆանատիկութիւնը թէ կրթութեան միջոցով և թէ քաղաքով Արեւելում ընդունված կարգական այն բողաբականութիւնը, որ վերջերսս դործարկում էր: Մասնաշաղկանների կրթութիւնը պէտք է կատարվի մի կողմից կրթելով ժողովրդին, իսկ միւս կողմից սուլաններին՝ փոխադրելով ներկայ տեղէն, նախապաշարմունքների մէջ թաղված հոգևորականին կրթված անձնատրութիւններով:

Ներքին գործերի մինիստրութիւնը կարգաւորել է, որ այսուհետև քաղաքային դուրմանները կամ մեծան ընտրել մէկին քաղաքի պատուաւոր անդամ, ընտրութիւնը պիտի կատարվի ոչ թէ բաց կերպով, այլ գաղտնի բուժարկութեամբ: Գուժանները մինչև այժմ այն կարծիքի էին, թէ գաղտնի բուժարկութեամբ պատուաւոր

ատանից հետո մի ինչ որ Գուտտներեք և տակն ու վրա է անում ոչ միայն վանքի վերոյիջեալ նշանաւոր պատմական դերերը, այլ գրեթէ համայն մարդկութեան մտաւոր կենսընին պայմանները: Պատմութեան ամբողջ ընթացքում մենք չենք իմանում մէկ ուրիշ գիւտ, որը իր նշանակութեամբ կարողանար հաւասարվել Գուտտներեքի գիւտի հետ: Մամուլը գիւտ չէր միայն. նա մի և նոյն ժամանակ և ամենամեծ, ամենանակալ յեղափոխութիւն էր, մի վեճ յեղափոխութիւն, որը վիճակվել է մարդկութեանը կրք և իցէ տեսնելու: Ի՞նչ կարող էին անել մի Լիւտեր, մի Վոլտեր, մի Ժան-Փակ-Բուսսօ և այլն, և այլն, եթէ մամուլը չը լինի: Եկեղեցու բնքից Լիւտերը կարող էր կրակ թափել մի ինչ որ Վոլտերի, Լայպցիգի գլխին, բայց ամբողջ կաթիլով աշխարհը հրդեհեց: Տամար նրան անհրաժեշտ էր Գուտտներեքի մամուլը: Չը կար մամուլը, եկեղեցու բնքը, վանքը և սրանց արժանի թէ անարժան ասպատակները ունէին անապին նշանակութիւն, մեծ ազդեցութիւն մը-տաւոր ու բարոյական կենսընի վրա: Մինչ այդ գրագէտները և դիւանականները համարվելով էին վանքերում և համարվելով էին ոչ թէ ինչպէս ռուսները են ասում, ЖЕКА НА СНИЖЬ, ПАВЯТЬСЯ ВЪ ПОТОКЕ, ինչպէս այդ անում է այսօր մեր (և առհասարակ) վանականների ջախջախիչ մեծամտանութիւնը, հարկերից գրեթէ ինքնուրուիներ, այլ բայ էին անում դպրոցներ, արտագրում էին դրքեր, կազմում էին գրագրաններ, թանգարաններ և առաջ էին տանում զբաղմունքներ, գիտութիւնը, թէ և վերջինը միայն վերացական և միակողմանի կերպով: Բայց այս վերջին պարագան առ այժմ չէ հետաքրքրում մեզ. բաւական է այն, որ վանքերը և

անդամ ընտրելը պատուաւոր չէ ընտրելի համար:

Ռուսաց լրագիրները հարողելով այն իրողութիւնը, որ Եկեղեցւում, Նորկեղեցւում և Գանիայում սաստիկ տարածված է տէլեֆօնային հարողակցութիւնը, համեմատում են այդ փոքրիկ երկիրները Ռուսաստանի հետ: Վիճակագրութիւնը ցոյց է տալիս, որ Գանիայում և Նորկեղեցւում, որոնց ամեն միւրը ունի 2 միլիոն բնակիչ, 40,000 տէլեֆօն կայ, ուրին մօտ 100 մարդու վրա ընկնում է մի տէլեֆօն: Տէլեֆօնային հարողակցութեան այդպիսի զարգացման պատճառն այն է, որ նա մատչելի է ազգաբնակիչներին: Եկեղեցւում տէլեֆօն ունենալու համար պէտք է վճարել տարեկան միայն 25 ռուբլի և այդ գինը դեռ շատ մեծ է համարվում ու ղիտաւորութիւն կայ աւելի պակասներ: Եթէ օրինակ Ռիֆլիտի տէլեֆօնային վարչութիւնը փոխանակ 75 ռուբլի, տարեկան գինը նշանակէր 25 ռուբլի, տարակոյտ չը կայ, որ բաժանորդների թիւը անհամեմատ աւելի շատ կը լինէր, քան թէ այժմ: Իսկ միւս շատ քաղաքներում տէլեֆօնի տարեկան գինը Ռիֆլիտից անհամեմատ աւելի թանկ է:

Ի՞նչ պայմաններով կարող է մասնաւոր մարդը բէական դպրոց բաց անել: Այդ հարցին նորեք ժողովրդական լուսաւորութեան միջնատրութիւնը տուեց հետեւեալ պատասխանը: Բէական դպրոց բանալ կարող են մասնաւոր մարդիկ, առանց որչէ կրթական ցենդ ներկայացնելու, բայց պէտք է տեսուչ հրահրեն կրթական ցենդ ունեցող անձ, որը մի և նոյն ժամանակ և մանկավարժական փորձ ունենայ: Գպրոց պահողից պահանջվում է յայտնի բարոյական ցենդ, որի մասին միջնատրութիւնը նախօրոք ժողովում է իր հիմնարկութիւնների միջոցով տեղեկութիւններ:

Հին-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 15-ին քաղաքի շուկայում թուրքերի մէջ սաստիկ կուր ծագեց: Հինգ հողի քաղաքացի թուրքը յանկարծ յարձակվեցին մէկի վրա, սկսեցին անհրաժեշտ կանակոծել: Մի կերպ աղաւթելով յարձակման ենթարկվածը վազեց մտաւայ խանութներից մէկը, վերջից իր մահակը, նորից կուր ատպարէզ նետվեց: Այդ միջոցին կուր սաստկացաւ, փայտեղի հարուածները կտրտի առատութեամբ էին տեղում: Ետևում աստուրի դպրոցից, անմիջապէս օգնութեան հասան մի խումբ, փայտեղի զինված, Սարվան թաղեց թուրքը, բայց ամբողջ կառողացաւ մի կերպ ընդհարման առաջն աններ:»

ՎԱՂՁՎԱՆԻՑ մեզ գրում են. «1897 թ.ի դեկտեմբեր ամսի վերջերին դաժան ձմեռան ցրտից ու բուրբից սահմանի վրա խեղդվեցին չորս հողի գաղթականներ. նրանց դիակները մնացել էին ձիւնի հաստ շերտերի տակ: Անվանականները մատուցանում էին վերոյիջեալ ծառայութիւնները: Այսօրվայ Բօսնիցիները և Վանդերլիցները միայն կարող էին այն ժամանակ գրաւարան-թանգարան ունենալ: Մեր այսօրվայ Մանիլաօվները և Փատուբօլները միայն կարող էին այն ժամանակ վերջ գնել: Բաֆֆիի Քօնիթը գնելու համար այս ժամանակ հարկաւոր էր անապին դուրմար և այն էլ միշտ չէր գտնվում, որովհետև գրքերը արտագրվում էին, ուստի և խիտ քիչ էին և շատ թանկ էին նստում:»

Ուրիշ է այսօր՝ Գուտտներեքի գիւտից յետոյ: Այսօր Քօնիթը 2 ռուբլիով ուր և որքան ուղում էք, կարող էք ստանալ, իսկ 5 կոպէկ վճարելով կարող էք կարգալ նրան առաջին պատանած գրագրարանում: Ահա անցեալի և ներկայի անապին տարբերութիւնը այս պարզ օրինակի մէջ: Բայց սրանով դեռ ևս չէ վերջանում տարբերութիւնը: Վերջինքը հէնց նոյն Բաֆֆիի Քօնիթը. այն ժամանակ հայկական մտքի այս հիմնալի արտագրութիւնը մենք չէինք կարող ունենալ, որովհետև այն ժամանակները մեր հոգևոր հայրերը, մեր մտաւոր ու բարոյական աննոր մծօնօպոլիտները բաւականանում էին միայն մեր սիրտն ու հոգին կերակրելով (թէ ինչպէս—դա դեռ ուրիշ հարց է), միանգամայն անտես առնելով մեր միտքն ու գրելու: Մեզ դարձել հոգևորականութեանը, որ նա մեր սիրտն ու հոգին էր միայն կերակրում և այն էլ ոչ այնքան առողջարար մնալով, մի և նոյնը կը լինէր, ինչպէս և թէ, օրինակ, մենք մեղադրեցինք այսօր կապիտալիստներին, որ նրանք բանտորի օրապահիկի հաշուին կապիտալ են դիտում: Ինչպէս առաջին, նոյնպէս էլ երկրորդ պարագայում մեր մեղադրանքները ցոյց կը տային մի-

ցեղ օրերը, տեղական կառավարութեան թոյլ-տուութեամբ, մի քանի դաղթական հայեր գնացին և բերեցին այդ շոր գոնեքից միայն երկուսին, կնոջը և ամուսնուն, երկու երեխաներին չէին կարողացել գտնել: Չունելով դիմելները, չէր հասած որ այդքան ժամանակ էր անցել, չէին փչացել: Նոյն օրը դիմելները յանձնեցին հողին:»

ԱՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Մեր քաղաքի առողջ կլիման և բնութիւնը այս տարի գրաւել են սովորականից շատ ամառանոց եկողներ: Բայց տարաբախտաբար մի կողմից չորեքը, միւս կողմից անչարժ կեանքը տիրութիւն են պատճառում մեր հիւրերին: Միակ յարմար վարձարար անպիտի փոշի է բարձրանում, որ շատերը հրաժարվում են մանզար այդտեղ: Միմէ գծուար է մեր քաղաքային վարչութեան համար, որ երեկոնները ջրել տայ այդ փոքրիկ տեղը:»

Հին-ՆԱԽԻՑԻՑԻՑԻՑ մեզ գրում են. «Թուրքի 12-ին, գիշերվայ ժամը 12-ին, յանկարծ Թմբուզ գիւղի հիւսիս-արևելեան ճորճօտը լուսաւորվեց մի անսովոր լուսով. ամեն կողմից աղմուկ աղաղակ, դանդաղանքներ, ամբողջ գիւղը ոտքի վրա էր: Շուտով պարզվեց որ դա հրդեհ էր: Գիւղից հարիւր սաժէն հեռավորութեան վրա այրվում էր Մահադ-Սադրի ցորենի խորքերն ու կալը, որը հրդեհել էին թշնամութիւնից դրված: Վրէժնորութեան պատճառով այդպիսի ազդեղ գործեր կատարելը, տարաբախտաբար, մեր գիւղական ժողովրդի մէջ յաճախ է կրկնվում:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶԻՆԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Ամեն փորձանք մի խրատ է: Այս ճշմարտութիւնն անհրաժեշտ դարձաւ նոյն իսկ Զինաստանի վերաբերմամբ: Երկուսին պետութեան մէջ ամենքը չեն համոզուած, թէ չինականութիւնը կատարելութիւն է: Վերջին ժամանակներս այդ խեղճ պետութեան գլխին թափված հարուածները հարկադրեցին չինացուն սթափվել, հասկանալ իր չարն ու բարին: Հեռավորներից արդէն գիտենք որ Զինաստանում ապստամբական մեծ շարժում կայ, որ դիտուով սպառնական դիրք է բռնում կառավարութեան դէմ: Այդ ապստամբութիւնը յարուցել է յեղափոխական կուսակցութիւնը, որ կոչվում է երիտասարդ չինացիների կուսակցութիւն և իր դրօշակի վրա գրել է եւրօպական սկզբունքներ: Անբաւական լինելով Զինաստանի ներկայ դրութիւնից, որի շնորհիւ այդ անապիտ պետութիւնը անխնայ կեղծվում է աւելի հզօր ազգերի ձեռքով, կուսակցութիւնը ձգտում է ոչնչացնել այժմեան

այն մեր սեփական խակութիւնը հասարակական դասակարգերի գոյութեան ամենաէական պայմանների հակադրութեան մէջ: Հոգեորակաւ խակութիւնը իբրև մի յայտնի դասակարգ, իր գերիշխող դերը պահպանելու համար, չէր կարող ուրիշ ընթացք տալ նոր սերնդի կրթութեան գործին: Այսօր իսկ նա չէ կարող անել այդ անա թէ ինչ պատճառով առաջադէմ ազգերն աշխատում, ամեն ճիւղ են թափում, որքան կարելի է հեռու պահել հոգեորակաւ խակութիւնը մասնավորական ասպարէզից և կամ աւելի պարզ ասած՝ դպրոցից և այն էլ հասարակ, տարրական դպրոցից: Մեր զԱՏԻ-առաջադիմականները կարող էին անձամբ լինել մանկավարժութեան տարրական պահանջների հետ, կամ կարող էին անտես առնել թէ ինչ հիմունքների վրա է դրված դպրոցական հարցը առաջադէմ Եւրօպայում. բայց միմէ ներելի է, որ նրանք չեն ճանաչում Ռուսաստանը, չը գիտեն թէ ինչ սկզբունքներից է ծնունդ աւել այստեղ ծխական և զեմետոլոյական դպրոցների մրցումը:

Թող ներէ՛ մեզ ընթերցողը. մենք ուզում ենք մի ընդ չորով մեր յօդուածի ուղիղ և մի փոքրիկ բայց կարծում ենք ոչ անհետաքրքիր, դէպքի մասին մի քանի խօսք ստեղծ: 1887 թ. կանին տողերին դրոշմ արարում էր Փրնեկով: Փրնեկովի կանտոնում, ինչպէս և մի շարք շվեյցարական առաջադէմ կանտոններում, տարրական դպրոցներում կրօնի դաս չը կայ: Սակայն իւրաքանչիւր ծնող իրաւունք ունի շարժաթ օրը ձաչից յետոյ իր երեխային ուղարկել եկեղեցի, ուր միայն և դաստիարակում է կրօնը: Մենք ապրում էինք մի գերմանացի բանաւորի մօտ, որի կինը ֆրանսուէի էր, սակայն երկուսն էլ Շվեյցարացի: Արդէն հասակ առած,

թագաւորող տունը, վերացնել մանդարինների բռնակալութիւնը և կարգ ու կանոն մտցնել վարչութեան մէջ: Այդ հոսանքը մեծ համակրութիւն է գտնում չինական ժողովրդի մէջ: Առասկացութեան գլուխ է կանգնել երիտասարդ Ան-Նու-Սէն, մի լուսաւորված, եռանդուն գործիչ, որ ջերմ հարեմատել է և շատ բնորոշակ ազդեցություն: Նրա կեանքը արիւմտները մի մեծ շարք է: Մի քանի անգամ քիչ է մնացել մահվան ենթարկվել: Մի անգամ, երբ նա զընդվում էր Լոնդոնում, օրը ցերեկով, փողոցի մէջ, չինական դեպատմութեան անդամները յարձակվեցան նրա վրա և բռնութեամբ փակեցին նրան, որպէս զի յարեմար միջոցին ծածուկ ուղարկեն նրան Զինաստան, ուր, ի հարկէ, չէին ինչայի նրան: Բայց այդ փորձանքից նա ազատվեց իր եռանդով և ճարտիկութեան շնորհիւ: Այժմ նա մի լաւ կազմակերպած դրքեր դրուել է անցել, մի քանի անգամ յաղթել է չինացիներին և սարսափ է պատճառում չինաց կառավարութեան:

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

Անս այն ծանուցադրքը, որ սպանիական կառավարութիւնը Վալինդոնի ֆրանսիական դեսպան Վամբունի միջոցով յանձնեց Միացեալ-Նահանգների նախագահ Մակ-Կինլէին. «Միացեալ Նահանգները պահանջեցին Սպանիայից հեռացնել սպանիական զօրքերը Կուբայից և այդ պահանջը մերժեց Սպանիան, ուստի երկու կառավարութիւնները, ջառ է ասել, պատերազմի մէջ են: Սպանիան խոտուովանում է, որ ինքը յաղթված է այդ կողմից, և այդ պատճառով երկրը պիտի սաստիկ տանջվի: Նկատի առնելով այդ ճանդամները, սպանիական կառավարութիւնը կարծում է, որ հասել է ժամանակը դիմելու Միացեալ-Նահանգներին և խնդրելու աջակցել պատերազմը վերջանալուն: Նա խնդրում է ֆրանսիական դեսպանի միջոցով յայտնել, թէ ինչ պայմաններով ամերիկական կառավարութիւնը համաձայն կը լինի հաշտութիւն կնքելու:

Վալինդոնում հաւատ չընծայեցին այս պաշտօնական գրութեան, որովհետև նրա մէջ Սպանիայի կողմից որ և է պայմանները չը կային, ուստի կարելի էր ենթադրել, որ այդ ծանուցագիրը նպատակ ունի իմանալ ամերիկական քաղաքականութեան բուն ձգտումները: Բայց երբ քաղաքականութեան յայտնի դարձաւ, որ Սպանիան անկեղծօրէն ուզում է հաշտութիւն կնքել, այն ժամանակ նախագահ Մակ-Կինլէ անձամբ սկսեց խօսել հաշտութեան պայմանների մասին: Պատերազմական գործողութիւններից, այնուամենայնիւ, շարունակվում են, թէ և փոքր չափերով: Այսպէս, ամերիկացիները ռաբակոնցերին Մանչանիլիո անունով նահանգի վրայ, որ գտնվում է Սանտ-Նազոի արևմտեան կողմում: Նախահանգիստը պաշտպանում էին մի քանի նահանգներ, որոնք, ի հարկէ, չէին կարող կուր

մտաւորապէս 60 և 50 տարեկան, այս ծերունիները սիրում էին իրար երիտասարդական ամենաչքով սիրով: Բայց, դարձնալով բան, չէր անցնում և մի ուրբաթ երեկոյ, որ տանուէրերս թունդ վէճել չը բռնվին իրար հետ: Մէկ երկու, երեք... վերջնապէս այս ուրբաթ երեկոնների վէճը չէր կարող չը հրակրել իր վրա մեր ուշադրութիւնը: Բանից ինչ է դուրս գալիս, ընթերցող: Մերոնիներն անձաւանդ մնալով՝ մի հոգեորդի են վերցնում պահելու: Վերջինս, քննադատելով Մարի-ն, այն ժամանակ տար տարեկան հասակուն էր: Մայրն ուզում էր որ նա շարժաթ օրերը յաճախ կրօնի դասին, իսկ հայրը հակառակում էր դրան: Կնոջն ասացինք, ամեն ուրբաթ երեկոյ այս հարցը ձգտում և թունդ վէճել կերպարանք էր ընդունում, մինչև որ երկու կողմն էլ համաձայնվում էին կանչել Մարիին և նրան տալ լուծելու ծնողների մէջ ձաղած վէճը: Կնոջ հարկ կայ աւելացնելու, որ Մարին ընտրում էր կանաչ դաշտերում վազվելը: Մեր «առաջադիմականներն» անչուռն այսպիսի մի բարդ հարցի լուծումը մի ինչ որ տար տարեկան մանուկի վճռին չէին ենթարկել: Բայց շվեյցարացի բանտըրը այսպէս էր անում. Տե՛նց արա համար էլ նա շվեյցարացի բանտըր և ոչ թէ չայ «առաջադիմական» էր...

Բայց վերադառնանք մեր յօդուածին: Մենք ասացինք, որ սկզբից խաւարի դէմ կընկնուր բոլոր դէնքերը հոգեորակաւ խակութեան ձեռքին էին: Բայց Տե՛նց որ այդ դէնքերի դէպօն սկսում են մուտք գործել և ուրիշները, հոգեորակաւ խակութեան սկսում է կռու այս ուրիշների դէմ և այսպիսով սկզբից լցվի և առաջադիմութեան միակ պաշտպանը լինելով՝ նա տաւաւ առ տակաւ սկսում է փոխել իր դիմագիծը.

սկսել ամերիկացիների ծովային հրէջների դէմ: Հէնց որ սրանք սկսեցին բուռներ արձակել, սպանիական նաւակները երեքը վառվեցան պատրոզների նման: Չորս ժամ կրակ թափելուց յետոյ ամերիկական նաւատորմը հեռացաւ, բայց Մանչանիլիոն դրաւելու միտքը թողնված չէ, սպասում են օդանավն զորաբաժնի:

Կնոջն ասացինք է հեռագրիները, Սպանիայում ժամանակաւորապէս ջնջված են տանձնադրական մի քանի ազատութիւններ: Այդ արդէնքներն ամենից լաւ պատկերացան լրագրութեան մէջ: Առաջին օրերում նոյն իսկ պահպանողական լրագիրները մէջ երևում էին անապիտ սպիտակ տեղեր, որոնք ցոյց էին տալիս, թէ ինչ պատերազմներ է գործել օֆիցեր ցեղազորի կարմիր մատիտը: Բայց այդ սպիտակ տեղերն էլ վտանգաւոր էին, որովհետև սպանիացիների բարբոթված երեւակայութիւնը լցնում էր այդ տեղերը ամեն տեսակ սարսափներով. ուստի Սպանիայ կարգադրեց որ ջնջված կտորների տեղը սպիտակ չը մնան, այլ լցվեն աւելի անմեղ բովանդակութիւն ունեցող նիւթերով: Այդ ժամանակից սպանիական լրագիրները աւելի օտարտի տեսք ստացան: Օրինակ, «Heraldo» լրագրում, առաջնորդող յօդուածի տեղ սպիտակ Սպանիայի կենսաւարութիւնը, իսկ միւս օրը նոյն տեղում երևաց մի վէպի շարունակութիւնը, որից առաջ դրված էին 14 անկապ տողեր, որ թողել էր ցեղազոր մի մեծ առաջնորդող յօդուածից: «Progreso» լրագրիւր ամեն օր տալիս էր քաղաքական-ժողրական նկարներ: Սպանիայի հրամանից յետոյ նա սկսեց առ իր ընթերցողներին նկարներ Առտուածաչնից: Այսպէս են բոլոր լրագիրները:

ՆԱՄԱԿ ՊԱՐՏԱՔԱՍՏԱՆԻՑ

Ս օ վ ռ Վ Ր Բ ու լ ա զ, յ ու լ ի ս ի 5-ին

Պարսիկ խաների հարստահարութիւններից բողբոջին ճնշված, այսօր մօտ 10,000 հայ լուսաւորչական ժողովուրդ (հայախօս և թուրքախօս) պատրաստվում են ընդունել մահմեդականութիւն, յուսալով որ նոր կրօնի մէջ դրանք փոքր ինչ ազատ կը լինեն... Կուք փորձում էր դրանց համոզելով իրանց այդ մտապրոթիւնից, բայց ինչ նրանք ոչինչ չեն ուզում ըսել: Նրանք միայն մի բան են ուզում, կեանքի բարեխոսութիւն, իսկ թէ այդ բարեխոսութիւնը ինչ դնով կը դնվի, այդ մի և նոյն է նրանց համար... Սոստուաներն այլ ևս գին չունեն դարերով ճնշված ժողովրդի համար, որն այ ու ձախ պահանջում է խօսքից անցնել գործի, ասելով—գի՛տե՛մ ի՛նչ ի՛նչ ունեք անելու, թէ՛ք արեք, թէ՛ չէ՛ թուրքախօս ենք: Ո՛րն է այդ «իլլաչը», անչուռն պէտք է մտածի ընթերցողը և դիտելու, որ պէտք է զանազան կարծիքներ յայտնի այդ «իլլաչի» մասին: Ամենից յարմար «իլլաչը» ներկայ հանգամանքներում, դըպրոցներ բանաւրն է ժողովրդի մէջ: Այդ

թէ ինչ ուղղութեամբ—դա յայտնի պիտի լինի իւրաքանչիւրին:

Կնոջ անես. այսպէս է ստեղծված ազամորդին, մծնուպօլիան խիստ է շահաւէտ և նրան հեշտութեամբ ձեռքից բաց չեն թողնում: Իսկ կերպի մծնուպօլիան մի այնպիսի մծնուպօլիան էր, որով ղեկավարվում էր մարդուս ոչ միայն մտաւոր կեանքը, այլ և խիղճը: Մտաբերեցէք, ընթերցող, ինչպիսիքիսի սարսափների պատճառաբանութիւնը և դուք կը հասկանաք, թէ ինչ ենք ուզում անել:

Սակայն միակողմանի չը լինելու համար, անհրաժեշտ է նկատել այստեղ, որ միայն կղերականութիւնը չէ, որ ենթարկվել է այսպիսի կերպարանափոխութեան: Նոյն կերպարանափոխութիւնը տեղի է ունենում հասարակական իւրաքանչիւր դասակարգի դարգայման ընթացքում: Նախ և առաջ ի նկատի պիտի ունենալ որ հասարակական իւրաքանչիւր նոր դասակարգ ծնվում է իբրև անհրաժեշտ պայման՝ այս կամ այն պատմական ժամանակամիջոցում իրերի ընթացքի մէջ տեղի ունեցող փոփոխութիւնների: Երբ հին դասակարգերը այլ ևս չեն կարողանում գոհացում տալ հասարակութեան բոլոր խաւերին, նրա անգոհ մնացած մասն սկսում է կազմել, իրարից մի նոր դասակարգ: Իբրև ծրուածող, պտուղ հասարակութեան նոր պահանջների, այս նոր դասակարգն ինքն ըստ իրեան առաջադիմական պիտի համարվէ, պիտի սկսէ այդ պահանջները մինչ այդ գոյութիւն չունէին հասարակութեան մէջ: Սակայն հին դասակարգները չեն կարող անտարբեր մնալ դէպի նոր դասակարգը, որովհետև վերջինս ուզում է լուր առաջնիւններից նրանց ազդեցութեան և նշանակութեան մի մասը: Եւ անս սկսվում է նախ

10,000 հայերի մէջ կայ միայն 1 դպրոց: Անհրաժեշտ է ըստ անել էլի անհուաղն 12 դըպրոց, որոնց ծախսը իրանց վրա պէտք է վերցնեն հայ հասարակութիւնը կամ մասնաւոր բարեգործները գոնէ 5 տարի ժամանակով, մինչև որ ժողովուրդը հասկանայ ուսման նշանակութիւնը: 12 դպրոցի համար ծախս է հարկաւոր տարեկան մօտ 4,000 բուրլի. ուրիշ խօսքով՝ մի աննշան գումար:

Բարեգործները այդ ծախսերը կարող են կատարել իրանց գործակալների միջոցով, եթէ ունեն Ուրմի և Սովուդ-Բուրաղ քաղաքներում, որովհետև այդ 10,000 ժողովուրդը գտնվում է այդ քաղաքների միջև, իսկ եթէ չունեն գործակալներ, մենք առաջադրում ենք այս գործի համար դիմել Խոյի, Սայմասուի և Արբոնի առաջնորդական փոխանորդին: Պէտք է շատապէլ բանի դեռ ու չէ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պարիզից հեռագրում են յուլիսի 16-ից «Բիերբլանս» մի նամակ է ուղարկել «Temps» լրագրի խմբագրութեան, որի մէջ ցաւ է յայտնում, որ գրգռչները հրապարակով ժողովում են հանձնարարութիւններ և նրանց հասակակրոններին: Նամակը վերջանում է այս խօսքերով. «Ես ոչ գերմանացի եմ, ոչ անգլիացի, ոչ իտալացի, ոչ հրէյ: Իմ 40-ամեայ գործունէութեան ընթացքում ես չամ անգամ անշահաւէր ծառայութիւններ եմ մատուցել ֆրանսիային:»

ԻԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պօլսի թիւրքաց լրագիրները մէջ սպված և ճիւղը ֆեոսիկց ներշնչված յանդուպն յօդուածը մեծ պետութիւններից մի քանիսի հասցէին՝ կրետական և հայ գաղթականների խնդրի առիթով, իր վրա դարձրեց պետութիւնների ուշադրութիւնը: Կ. Պօլսից հեռագրում են յուլիսի 10-ից «Petit Parisien» լրագրին. «Մեծ պետութիւններից մէկի դեպքում այս օրերս բացատրութիւն պահանջեց թիւրքաց արտաքին գործերի մինիստրութիւնից այդ յօդուածների առիթով և չը բաւականացաւ իմիստրութեան խուսափող պատասխանից, թէ անհնարին է պատասխանատու լինել ամեն մի լրագրի գրածի համար այս և այն պետութեան դէմ: Երբ դեսպանը պիտի ցուցնէ օտմանան արտաքին գործերի մինիստրը անձամբ այցելեց նրան և հաղորդեց, որ յօդուածը տպող լրագիրներին խիստ յանդիմանութիւն է արված և այսուհետև այդպիսի յօդուածներ թիւրքաց մամուլի մէջ թող չեն տրվի:»

* *

Մի քանի ժամանակ առաջ ծովի մէջ ընկղմված ուսուցիչ Գանգուտու գրասաւոր նաւը ծովի տակից հանելու գործը իր վրա է աւել շվեդական շեյպուտունը ընկերութիւնը, 950,000 բուրլի վարձատրութեամբ: Ընկերութեան հաշուով մօտ 600,000 բուրլի ծախս կը նստի:

խուլ և ապա աշխարհ պաշարք հին դասակարգերի և նորի մէջ: Նոր դասակարգը դեռ ևս թոյլ է, ուստի առաջին ընդհարումները միմիայն կոտորած են առաջ բերում նրա շարքերում: Բայց այս կոտորածները կարող են միայն ժամանակաւոր նշանակութիւն ունենալ: Կարող են միայն կարծ ժամանակամիջոցով կանգնեցնել կատեցնել նոր դասակարգի անտեղ, որովհետև նրա դարգայմումը՝ հանդիմանալով իբրև անխուսափելի, բնական հետևանք հասարակութեան մէջ ձագած նոր պահանջների, անդադարձում է իր մէջ ամբողջ հասարակութեան գոյութիւնը, ուզում ենք ասել, որ վերջինս գոյութիւնը կախված է առաջինի դարգայմից: Այսպիսով նոր դասակարգն սկսում է քիչ առ քիչ ոյծ ստանալ, փոքր առ փոքր հաւասարվում է իր իրաւունքներով հասարակութեան միւս դասակարգերի հետ և ապա դարգայմով սկսում է գերիշխող տեղ բռնել նրանց շարքերում, մինչև որ հասարակութեան հին դասակարգերը ամենահանգիստ անհետանում է իսպառ, իսկ հասարակութեան նորանոր պահանջներն առաջ են մղողում մի նոր դասակարգ ևս, որի դէմ կուրելու համար համակարգվում են ոչ միայն հին դասակարգերը, այլ և խնդրի առաջիկա եղած դասակարգը: Եւ որովհետև կեանքն անընդհատ շարժման, դարգայման մէջ է գտնվում, ուստի և հասարակական դասակարգերն անընդհատ դարգայմում, առաջ են գնում, մինչև որ—կրկնում ենք—ամենից հին դասակարգը՝ վերջացնելով իր պատմական դերը, գոյութիւն է անցնելի անհետութեան մէջ՝ տեղ տալով մի որ և է նոր դասակարգի:

(Վը շարունակվի)

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՅ

ՍՄԵՐԻԿՈ-ՍՊԱՆԻԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ
ՎԱՇԻՆԳՏՈՆ, 22 յուլիսի: Մակ-Կինլեյ ստա-
ցա. կիսապաշտօնական տեղեկություն, որ Սպա-
նիան ընդունում է խաղաղության պայմաննե-
րը: Բայց առ ըստ սպասում են պաշտօնա-
կան պատասխանին:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 22 յուլիսի: Կայսրուհի Մարիա
Ֆեոդորովնայի անուանակոչության առիթով կա-
տարվեց զոհաբերական մաղթանք: Մայրաքա-
ղաքը զարդարված էր դրոշակներով: Նրեկոյնան
— լուսավառություն:

ՊԱՐԻՉ, 22 յուլիսի: Երէկ, ընդմիջ Ձուլայի
զանգառը, որով մեղադրում է Ժուլէին և
«Pet. Journ.» լրագրող զինվորականի մէջ:
Գատարանը վճռեց, — նրկարկել փաստաբան
Ժուլէին 2,000 ֆրանկ տուգանքի, հրատարա-
կել Մարիանին 500 ֆրանկ, պատասխանա-
տու խմբագրին 500 ֆրանկ, և երկրին միա-
տու 5,000 ֆրանկ վճարման փաստերի փոխա-
րէն, պարտաւորեցնելով նաև տպագրել վճիռը
տան լրագրիներում:

ՖԻՒՐԻՒՍՈՒՆ, 22 յուլիսի: Կայսր և կայս-
րուհին մտա մի ժամ մնացին ամբողջում, ուր
տեղի ունեցաւ հոգեհանգիստ: Իշխան Բիսմար-
կի ընտանիքի անդամները ճանապարհ դրեցին
կայսերական զոյգին մինչև կայսրան: Այս օ-
րերս Բիսմարկի մարմինը ժամանակաւորապէս
կը յանձնվի հողին, իսկ մի քանի շաբաթից յե-
տայ կը փոխադրվի մատուռը, որի կառուցման
արդէն ձեռնարկված է:

ԻՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԼՕՁԱՆՆ, Ա. Ահարոնեան. Ձեզ «Մշակ» ար-
դէն ուղարկվեց:
ԲԵՐԼԻՆ, Ա. Մանասեանց. Ձեր պատասխանն
ստացել ենք, բայց չի տպագրվի, քանի որ խն-
դիրն արդէն պարզ է:

ՓՐՕՎԻՒՆԵՆՍ (Մանրիկա), Գ. Խաչատրեան.
Ձեր ուղարկած յայտարարությունը կը տպագրվի:
ՍԹԷՄՅՈՒՒ (Մանրիկա), Յ. Չարմաքեան.
Ձեր խնդիրը կատարեցինք: Ձր գրուեց ինչո՞ւ
մինչև այժմ գրեք չեն ստացված:

ՂՈՒՐԱ, Մ. Ս. Նեղուժին կրեցէք ուսանող-
ներին համար հանդիմանակած փողերը միանուագ
ուղարկել. շատ անշարժար է այդպէս մաս-մաս
ստանալ և արձանագրել մատենանում:

Խմբագիր՝ ԱԼԷԳՍԱՆԻՒՐ ԳԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԻՒԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՐԻՈՐ ՀԻՒՆԿԱՆՈՅ
Բ. ՆԱՌԱՍԱՐԻՆԵԱՆ
(Կուկիս, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի
կիրակի օրերէն:
ԱՌԱՍՏՈՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՌԱՍԱՐԻՆԵԱՆ—11—12 ժ. վերաբու-

ժուլեան, վերնական (սիֆիլիս) և միլատու. Տ.
Կ. Մ. ԶԻՆՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին
և նեարդային Տ.
ԿԻՆ ԲԺԻՇԿ Ա. Ի. ՐՈՒԿԵՆԿՈ—10 1/2—11 1/2 ժ.:
կանանց և երեխայից Տ., ծաղկի պատուա-
տուհի:

Ձ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—11 1/2—12 ժ. կա-
նանց հիւանդ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և
երեխայից Տ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—12—1 ժ. ներքին, և մի-
լատուական Տ. ակնաչի, կոկորդի և թիթի Տ.
ԵՐԵՎՈՆԵՐԸ

Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՉԷ—6—7 ժ. ներքին և երե-
խայից Տ. նեարդային և մորթի Տ.

Բ. Ա. ՆԱՌԱՍԱՐԻՆԵԱՆ—6 1/2—7 ժ.
Տ. Ի. ՐՈՒԿԵՆԿՈ հիւանդանոցումը քիմիական
և խոչորացուցական հետազոտություններ է ա-
նում մէկի, իրի, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի
(կոնսիլիումի) և օպերայիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերաբուսուէ՝
149—150 Բժշկական ՆԱՌԱՍԱՐԻՆԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Լոյս տեսաւ
Գ. Է Բ Ե Ր Ս Ի
Մ Ա Ր Ի Ե Մ
(Homo sum)

Վէպը: Գերմաներէն ընդգրկի թարգմանց
Ստ. Մալխասեանց
428 երես: Գինը 1 ռուբլի: Գիւնը՝ Թիֆլիս.
Արմանսկո Իշատելսկո Երեսմատ.
(Հ. Շ.) 2—20

Ֆիլիպոսեանական
գործիքներ և մեքենաներ
Բացարարական բաւարանով և 250 նկարով:
Հրատարակութիւն թիֆլիսի հայոց Հրա-
տարակչական ընկերութեան:
Գինը 50 ԿՊԷԿ.
Գիւնը՝ ԹԻՓԼԻՍԻ Սոցիալական Իշատելսկո
արմանսկո Երեսմատ.
(Հ. Շ.) 28—40

ԵՐԳՈՒԵԱԼ ՀԱՒԱՏԱՐԱՍԱՐ
Ս ա մ ս ո ն Ս տ ե փ ա ն ե ա ն
ՅԱՐՈՒԹԻՒՆՆԵԱՆՑ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԳՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՐ
ԲԱԳՈՒ. հիւանդաց «Բարանտ-Օտէլ»
(Հ. Շ. Ե.) 7—10
Թարգմանվում է
Բ Է Ն Ս Օ Ն Ի
ՈՒ ՅԱՐԷ
վէպը, յունաց կենսագրից 3—3

ОТКРЫТА ПОДПИСКА

На заканчивающемся печатанием
2-ое вновь обработанное и дополненное издание
ЛИТЕРАТУРНО-НАУЧНОГО СБОРНИКА

„БРАТСКАЯ ПОМОЩЬ ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ“.

Въ настоящее удешевленное издание, содержащее болѣе 140 статей разнообразнаго содержания въ прозѣ и въ стихахъ, вошло болѣе 40 новыхъ, знакомящихъ съ одной стороны съ ужасными бѣдствіями турецкихъ армянъ, а съ другой—съ бытовыми и культурными условіями жизни армянъ въ прошломъ и въ настоящемъ. Къ книгѣ приложены двѣ отдѣльныя большія группы (болѣе 100 чело- вѣкъ) армянъ-переселенцевъ, снятыя съ природы, а также болѣе 150 рисунковъ (40 новыхъ), въ томъ числѣ многіе въ цвѣтныхъ краскахъ и два: „Рѣзня армянъ въ Трѣбизондѣ 1895 г.“ И. К. Айвазовскаго и „Весенняя буря“ Магдесіана, въ три тона.

Цѣна 3 р. на обыкновенной бумагѣ и 5 р. на велевевой
Стоимость пересылки наложеннымъ платежомъ. Число велевевыхъ экземпляровъ ограничено, и подписчики будутъ удовлетворены по времени поступления подписки. Высылающимъ задатокъ 1 руб.

Подписка принимается: въ Москвѣ: въ конторѣ «Русскихъ Вѣдомостей», въ книжныхъ магазинахъ Карбасникова (на Моховой), „Трудъ“ (на Тверской), «Новаго Времени» (Неглинный про- фздъ) и Вольфа (Кузнецкій мостъ); въ Тифлисѣ: въ Центральной книжной торговлѣ на Головинскомъ проспектѣ;

НВ. Лица, не окончившія счетовъ по 1-му изданію „Братской помощи“, благоволятъ послѣдшить окончаніемъ таковыхъ.
Покорнѣйшая просьба къ изданіямъ, сочувствующимъ цѣли настоящаго сборника, перепечатать объ- явленіе.
(б. н.)
Завѣд. ред. Гр. Джаншиевъ. 1—5

ԶԵԹԻ ԵՒ ՍԱՊՈՆԻ ԳՈՐԾԱՐԱՆ
Յ. ԹԱՅԻՐՕՎԻ ԵՒ Կ. ԱԼԻԻՍԱՆՕՎԻ

Վ Ա Ճ Ա Ռ Վ Ո Ւ Մ Է
2 Ո Ւ Ի Ս Ա Պ Օ Ն

Հինգ զանազան մեծութեան, №8, 13, 15, 18 և 24.
Գինը «ԿՈՎԱՍՏԱՆԸ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ» ԳԵՂԱՐԱՐԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ
(„Кавказское Товарищество Торговли Аптекаремми То-
варамъ“) և բոլոր բաղալից մազազիններում: Մեծ աքանակ գնումն նոյն իսկ գործա-
րանի մէջ.—Ներանեան շուսէ, սեփական տուն:
(б. н.) 5—12

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ «Ձեռնարկի առևտրական և գործարանական հաշուապահ հոսթեան»
ՌԻՍՈՒՅԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

Նրկու սեփական անձանց, 4 ամսվայ ընթացքում հաշուապահություն գործնականապէս, և-
րաշխարհելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:
ՊԱՐԱՊՄՈՒՆԵՔԻ ԱՌԱՎԱՆԵՆՆ ԵՆ

- Ա) Կրկնակի խտական հաշուապահություն բոլոր ամսանի առևտրական ձեռքերի, հան-
դերձ նաւթային արդիւնաբերական և կերտիսի գործարանական հաշուեհոստութեան:
Բ) Առևտրական թուղթաւորութիւն:
Գ) Առևտրական նամակագրութիւն:
Դ) Գեղարդութիւն և ամենալատ ձեռքերի ուղղութիւն:
Պարապմունքները սկսվելու են սեպտեմբերի 15-ից, հաշից յետոյ և պարբերաբար շարու-
նակվելու են իւրաքանչիւր 20ՐՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին
գործնական պարապմունքներ:
Ցանկացողները թող գիւմն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 5 ժամ երեկոյնան,
Ս Օ Լ Օ Լ Ա Կ, Սերգիեվկայա փողոց, տուն Լիպիցեանի, № 20:
Վերջինչպէ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խրդիկելի գրա-
վաճառանոցում և Նեղինակի մտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում:
Գինը է 3 ռ. 50 կոպէկ: Ստարաբաղաբացիները գիրքը գնելու համար կարող են գիւմն Նե-
ղինակին, առանց պատի ծախս վճարելու:
(б. н.) 12—30

Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ի Ռ Թ Ի Յ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի առ 1-Ն Յ Ո Ւ Լ Ի Ս Ի 1898

Table with 3 main columns: Պ Ա Հ Ա Ն Ձ Ք, Թ Ի Ֆ Ի Ս Տ Ի Ռ, Ը Ն Պ Ա Մ Ն Ը. It contains financial data for various categories and a summary row at the bottom.